

է իւր մնուած տեղը, Գետիկ վանքը, որ շուրջանէ, և այրեալ շինուածքն որ ի նման—էջ 148:

Բաւականանալով Նոր Գետիկ կամ Գոշավանքին և նրա նշանաւոր հիմնադրին վերաբերեալ պատմական այս տեղեկութիւններով, տեսնելք թէ այժմ Բնչ գրութեան մէջ է գտնուում այդ ուսումնավայրն ու սրբավայրը:

Բ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

Դիլիթան աւանից դէպի արեւելք, մօտ 14—15 վերստ հեռաւորութեամբ, անտառապատ լեռների ծանծուռ կոշուած ձորի մէջ, 1250 մետր ծովի մակերեսից բարձր, տարածուած է մի հայաւնակ աղքատիկ գիւղ: Բնութեան այս զեղեցիկ վայրում ապրում են երեսուն տուն չքաւոր և համարն թէ կիսավայրերի ընտանիքներ՝ իրենց ապրուստը հայթայթելով սակաւաթիւ վարելահողերի նահապետական ձերի մշակմամբ և որսորդութեամբ:

Դեռ գիւղը չմտած՝ այցելուի ուշադրութիւնը գրաւում են մի խումբ տաճարներ, որոնցից մի քանիսը զեռ կանգուն և փառալէն են, իսկ միւսները կիսաւեր և կիսակործան: Իսկոյն աչքի է ընկնում հակադրութիւնը. սրբատաշ քարից շինուած հոյակապ տաճարներ և հազիւ գետնի մակերեսից են երեսացող աղքատիկ խրճիթներ. արդեօք ում համար են այս զեղաբանդակ եկեղեցիները. դրանք ամայի են երևում. ոչ երկիւղած աղօթողների խմբեր կան և ոչ սեռազգեստ կրօնաւորների շարքեր: Ծառտաբարուեստ կաթնօղիկէների նեղ ու երկարածն լուսամուտներից ծիծեռնակներն ու ճնճղուկներն են միայն ներս ու դուրս թռչում և իրանց ողբախառն երգով շրջակայ խաղաղութիւնը վրդովում...

Այդպէս չէր եօթը հարիւր տարի առաջ, երբ կնանքը ետում էր բնութեան այս զեղածիծաղ վայրում. երբ հեղինակաւոր և առաքինի ուսուցչի շուրջը հաւաքուած էին Հայաստանի ամեն կողմերից եկած ուսումնաստենչ երիտասարդները և ոգևորութեամբ լսում նրա աղքու գասախօսութիւնները: Աստուածաբան և իրաւաբան Մխիթար Գոշն էր այն հմուտ ուսուցիչը. Նոր Գետիկ վանքն է այս եկեղեցիների խումբը: Այժմ թէ վանքը և թէ գիւղը իրենց հիմնադրի անունով Գոշ են կոչուած: Գոշ Մխիթարի յիշատակն յաւերածացող այս վանքում վանահայր անգամ չկայ, որ հոգացողութեամբ պահպանէ սրբավայրերը. ամեն բան թողնուած է գիւղական տղէտ քահանայի խնամքին, որ հարկաւ ոչինչ տեղեկու-



MA-2052

թիւն չունի ոչ վանքի անցեալի և ոչ էլ նրա հանճարեղ հիմնադրի մասին: Նրա թոյլութեամբ մի ինչ որ զէզ համարեան տաճարի տակ ըօստումն է ցանել... Այն սրբավայրում, որ դեռ եօթ հարիւր տարի առաջ գիտութեան և ուսման սերմերն էին ցանուում, այժմ ըօստումն է ցանուում...

Սակայն թողնենք մեր տխուր խորհրդածութիւնները և տեսնենք թէ ինչ է մնացել այժմ¹⁾ Նոր Գետիկում կերակուս պատմագրի յիշած տուսներնք մեծ ու փոքր տաճարներից:

I

Գ Ո Ւ Ի Թ

Սկսենք գաւթից: Սրբատաշ քարից շինուած այս հոյակապ շէնքը ներսից անխախտ է. արտաքուստ՝ թափուած են միայն կլետուրի սալ քարերը: Երկու մուտք ունի. մէկն արեւմտեան, մյուսը հիւսիսային կողմից. արեւմտեանը կամարակապ է, գոյնզգոյն քարերով Գաւթի կամարակապ տանիքն ու զմրէթը կանգնած են չորս սիւնների և ութը կիսասիւնների վրայ: Յատակը ծածկուած է սալաքարով: Արեւելեան որմն մէջ, աջ և ձախ կողմից, կան երկշարի խորաններ. այս որմին կցուած են նայնպէս բեմի նմանութիւն ունեցող և սրբատաշ քարից շինուած փոքրիկ պատուանդաններ, որոնց վրայ քանդակուած են փոքրիկ սիւնազարդ կամարներ: Այդ պատուանդանների վրայից է երկրորդ շարի խորանների մուտքը: Գաւթի խաւաքանչիւր կամարի տակ եղել է մի մի լուսամուտ. դրանցից միքանիսն այժմ փակ են:

Գաւթի տարածութիւնը՝ արեւելքից—արեւմուտք 18 արշին է, իսկ հիւսիսից—հարաւ 19 արշին 2 վերջուկ: Միապագայ սիւնների բարձրութիւնն է 2 արշին 6 վերջուկ. սիւնների շրջապատն է 3 արշ. 11 վերջուկ: Գաւթի բարձրութիւնը 13 արշին 5 վերջուկ է, իսկ կամարների բարձրութիւնը 8 արշին 6 վերջուկ. կամարների միջի տարածութիւնը 6 արշին 2 վերջուկ:

ԳՈՒԹԻ ՈՐՁՍԵՆԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արեւմտեան մուտքի կամարի վրայի արձանագրութիւնը կիսով չափ եղծուած է. կարդացուում է.

1) Հիւսմամն Աստուծոյ... որդի Գալլամազին միաբա-

¹⁾ Չանի եկաթագիրն արել է՛ր 1802 թ. աժառ, զորոյցական ճանապարհորդութեան միջոցին, մեր ջանալէք աշտիներէնքն օգնութեամբ: